Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԸՆԹԱՑՍ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ

(ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմ, սեպտեմբեր 12, 2010 թ.)

Սիրելի բարեպաշտ զավակներ մեր,

Հայրապետական սիրով ողջունում ենք ձեզ բոլորիդ: Ուրախ ենք գլխավոր սեղանի շուրջ Տ. Հովնան եւ Վաչե Սրբազանների կողքին տեսնել մեր Քույր Եկեղեցիների Բարձրաշնորհ եպիսկոպոսներին, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան մեծահարգ Թաթուլ Մարգարյանին եւ գլխավոր հյուպատոս Գրիգոր Հովհաննիսյանին, ՀԲԸՄ նախագահ մեծարգո Տիար Պերճ Սեդրակյանին, Լոս Անջելեսի քաղաքապետ Անտոնիո Վիեռագոսային, թեմական խորհրդի ատենապետ Տիար Ժոզեֆ Կանիմյանին իր ազնիվ տիկնոջ հետ, Տեր եւ Տիկին Արմեն Համբարին, դոկտոր, բարեշնորհ Վարուժան սարկավագ Ալթըպարմաքյանին՝ իր սիրելի տիկնոջ հետ եւ շատ սիրելի Տեր եւ Տիկին Մայքլ Անտոնովիչին: Ողջունում ենք Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Մուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, Հայ Կաթողիկե եւ մյուս հարանվանությանց ներկայացուցիչներին: Գոհություն մատուցենք Ամենակալ Աստծուն, որ այսօր՝ համախմբված ճաշի սեղանի շուրջ մեր ժողովրդին սրտակից եւ հարազատ եղբայրների հետ, վայելում ենք մեր հանդիպման ուրախությունն ու բերկրանքը:

Փառք ենք վերառաքում Երկնավորին, որ Մեր Հայրապետության տասը տարիների ընթացքին երրորդ անգամ ենք Հովվապետական այցելություն կատարում ԱՄՆ Հայոց Արեւմտյան տիրախնամ թեմ եւ ականատես ենք հավատավոր հայորդյացդ եկեղեցասեր ոգուն ու ազնիվ ջանքերին եւ բարեզարդյալ կյանքին հայ համայնքի, ինչը միշտ քաջալերություն է Հայրապետիս համար:

Այսօր իրապես կարող ենք խոսել ազգային-եկեղեցական կյանքում հաջողությունների եւ բազում արդյունաշատ իրագործումների մասին: Տիրոջ օրհնությամբ Մեր Հայրապետության տասը տարիների ընթացքում Մեզ ծառայակից եկեղեցականների, ազնվահոգի բարերարների, հայրենի պետական իշխանությանց եւ հավատավոր մեր զավակների աջակցության շնորհիվ հնարավոր եղավ ապահովել առաջնային անհրաժեշտ պայմանները եկեղեցական կյանքի առաջընթացի համար: Սրտի ուրախությամբ ենք անդրադառնում, որ նոր ձեռնադրված հարյուրավոր եկեղեցականներ այսօր իրենց ծառայությունն են բերում Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր թեմերում, իսկ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր կրթօջախների առաքելությանը միանում է նորաբաց Հառիճավանքի դպրանոցը, որոնք այսուհետ ընձեռելու են հնարավորություն ունենալու 250 ուսանողներ, ներկայիս 200-ի փոխարեն: Ազնվահոգի մեր բարերարների առատաձեռն նվիրաբերումներով անցնող տասնամյակում կառուցվեցին եւ նորոգվեցին 100-ից ավելի եկեղեցիներ ու վանքեր: Աստծո օգնականությամբ նույն նախանձախնդրությամբ շարունակվում է եկեղեցաշինությունը, որի պերճախոս, պանծալի վկայություններից մեկն է Տիրախնամ ձեր թեմի նորակառույց առաջնորդանիստ եկեղեցին: Գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ, որ այս տարիներին լույս ընծայվեց բազմաքանակ հոգեւոր-

եկեղեցական գրականություն, իրագործվեցին կրթական ծրագրեր դպրոցներում, Մայր Աթոռի ուսումնակրթական հաստատություններում, եթեր հեռարձակվեց «Ծողակաթ» հեռուստատեսությունը, բազմապատկվեցին հեռուստատեսային եւ ռադիոյի հոգեւոր հաղորդումները, սկիզբ առավ հոգեւոր սպասավորությունը Հայոց բանակում, զորացավ հոգեւոր խնամքը կալանավայրերում, հիվանդանոցներում եւ խնամատար հաստատություններում: Ուշադրության ներքո եղան ընկերային ծրագրերը՝ ծնողազուրկ երեխաների եւ կարիքավորների խնամքով ու աջակցությամբ: Հայրենիքում եւ Սփյուռքում կազմավորվեցին նոր համայնքներ ու թեմեր: Բարեկարգվել ու բարեզարդվում է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Նոր կառույցներն ու նորոգությունները նպաստում են մեր Եկեղեցու հոգեւոր առաքելությանը, Մայր Աթոռի՝ իր զավակներին միավորող եւ դեպի Հայրենիք կանչող զորությանը: Բյուր փառք Աստծո, այսօր հավատացյալներով լի են մեր եկեղեցիները, եւ միշտ աղոթք ու հայց է հնչում առ Աստված մեր Եկեղեցու պայծառության, հայրենի երկրի եւ պետականության զորացման, աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության ու ծաղկուն ապագայի համար: Արդարեւ, հոգեւոր առաջընթացն է պայմանը մեր ազգային վերազարթոնքի ու բարգավաճումի: Որքան զորեղ են Եկեղեցին ու հավատքը հայոց, այնքան զորեղ են ազգն ու Հայրենիքը:

Բարեհույս այս ընթացքների կողքին, սակայն, մեր Եկեղեցին դեռ խնդիրներ ունի հաղթահարելու: Այսօր շարունակվում են աշխատանքները քարոզչական եւ հոգեւոր-կրթական ծրագրերի ընդլայնման, ինչպես եւ՝ արդի հիմնախնդիրների ու հարցերի հետ կապված մեր Եկեղեցու դիրքորոշումները վարդապետական հիմնավորումներով բանաձեւելու եւ հստակ ներկայացնելու ուղղությամբ, որի համար անհրաժեշտ են լայն իմացությամբ եկեղեցականներ: Սուրբ Էջմիածնի միաբանությունից ներս արդեն ունենք բարձրագույն կրթությունը աշխարհի հեղինակավոր համալսարաններում ամբողջացրած հոգեւորականներ, առաջիկայում եւս միաբանության շարքերը պիտի համալրվեն նման եկեղեցականներով, ինչը մեծապես կնպաստի հիշյալ կարեւոր նպատակների իրականացմանը: Եկեղեցու զորացման կարեւորագույն խթան կհանդիսանան Հայ Եկեղեցու Սահմանադրության կազմումը, ծխական համայնքների եւ վանական կյանքի լիարժեք կազմակերպումը, ինչպես նաեւ թեմական եւ ծխական կանոնադրությունների որդեգրումը, որոնց ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Մտահոգիչ է մնում մեր եկեղեցական կյանքի երկատվածությունը Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում, որի արտահայտություններից մեկն է Ամերիկայում առկա թեմական զուգահեռ կառույցների հակականոնական վիճակը՝ տասնյակ տարիներ խաթարելով մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքի բնականոն ընթացքը: Այս իրավիճակը ոչ բնական է համարվում նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի կողմից: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ ներկայիս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Անթիլիասի հարաբերությունները լավատեսությամբ են համակում հուզող հարցերի բարվոք լուծման վերաբերյալ: Կազմվել են Ամենայն Հայոց Հայրապետության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հանձնախմբեր, որոնք աշխատանքներ են իրականացնում առկա խնդիրների լուծման ուղղությամբ: Վստահ ենք, որ հետեւողական գործունեության շնորհիվ պիտի կարողանանք վերահաստատել միասնությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ ի նպաստ հավատավոր մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքի բարգավաճման:

Ազգային մեր կյանքը հուզող առաջնահերթ խնդիրներ այսօր շարունակում են մնալ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը եւ Հայոց Ցեղասպանության ճանաչումը, նպատակներ, որոնց ուղղությամբ Մեր հայրապետության առաջին օրերից աշխատանքներ ենք իրականացնում եկեղեցական ու կրոնական շրջանակների միջոցով: Լիահույս ենք, որ ներդրվող միասնական ջանքերը հայրենի իշխանությանց եւ մեր ժողովրդի իրենց արդյունքները պիտի բերեն, ճանաչում պիտի գտնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, եւ հաղթանակով պսակվի մեր Արդար Դատը:

Սիրելիներ, մեր բոլոր ջանքերը պիտի ուղղված լինեն մեր միաբանության ամրապնդման, Հայրենիքի ու Մայր Աթոռի շուրջ մեր ժողովրդի համախմբման ուղղությամբ: Մեր ջանքերը պիտի չպակասեն, որ ամրապնդվեն մեր ձեռքբերումները եւ կերտվեն մեր նոր հաղթանակները: Մեր ջանքերը պիտի չպակասեն, որ մեր զավակների համար հայրենյաց ժառանգությունը շարունակի լինել թանկ ու նվիրական, մայրենի լեզուն եւ Մաշտոցյան Գիրը հարազատորեն խոսեն հայորդյաց հոգիներին, եւ հավատի լույսը դեպի ուրախություն ու երջանկություն առաջնորդի նրանց կյանքի ուղին, եւ քրիստոնեական հավատքի եւ հայրենյաց ավանդների վեմի վրա հաստատված՝ միշտ անսասան, զորացյալ ու օրհնյալ մնա հայ կյանքը:

Այսօր առիթն ունենք վերստին Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքը բերելու Ձեզ, սիրելի Սրբազան Հայրեր, թեմի ողջ հոգեւոր դասին եւ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը միշտ աջակից բարեպաշտ զավակացդ: Մենք Մեր մասնավոր գնահատանքն ենք հայտնում առաջնորդ Սրբազանին՝ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, եռանդուն ու արգասավոր գործունեության համար: Կանադայի թեմում արդյունավոր ծառայության վաստակով Դուք ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմում նոր աշխուժություն ու վերազարթոնք բերեցիք՝ բազում իրագործումներ հավելելով նախկին վաստակյալ առաջնորդի՝ Գերաշնորհ Տ. Վահե արքեպիսկոպոս Հովսեփյանի ավելի քան երեք տասնամյակների բեղուն գործունեությանը: Նոր ծուխերի կազմավորումով, եկեղեցաշեն նոր ծրագրերով, սիրելի Հովնան Սրբազան, բազմապատկում եք հաջողությունները թեմում, շարունակելով աջակցել նաեւ Մայր Աթոռի ծրագրերի իրականացմանը եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի աշխատանքներին:

Գոհունակ սրտով երախտագիտության Մեր խոսքն ենք բերում Միացյալ Նահանգների իշխանություններին՝ որոնց բարյացակամ վերաբերմունքի ներքո ծաղկուն է հայ կյանքը Ամերիկայի օրհնյալ երկրում:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամերիկահայ մեր բոլոր զավակներին եւ աղոթք ենք բարձրացնում երկինք, հայցելով, որ Տիրոջ խաղաղությունն ու շնորհները միշտ լինեն մեր Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ հավատավոր մեր ժողովրդի վրա: Թող Տերն Իր օրհնության ներքո պահպանի Միացյալ Նահանգները, միշտ հավատքով զորացյալ եւ համախումբ՝ ազգս հայոց եւ օրհնի եկեղեցաշեն ու հայրենանվեր բոլոր գործերը. ամեն: